# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*18 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 172-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԹԻՎ 147-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 21-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Սարավան բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,05430 հա մակերեսով խոտհարքը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» թիվ 147-Ա որոշման վերնագրում և բովանդակության 1-ին կետում նշված «0,05430» թիվը փոխարինել «0,04110» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*18 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 173-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.05.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 148-Ա, 22.05.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 153-Ա, 154-Ա ԵՎ 155-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի 21.05.2025 թվականի թիվ 148-Ա, 22.05.2025 թվականի թիվ 153-Ա, 154-Ա և 155-Ա որոշումների վերնագրերում և բովանդակության 1-ին կետում նշված «արոտավայր» բառը փոխարինել «այլ հողատեսք» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 174-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 98-Ա, 100-Ա, 109-Ա, 138-Ա, 139-Ա, 140-Ա ԵՎ 142-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (Նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով), և 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 17.06.2025 թվականի թիվ 01/15.1/3671-2025 գրությունը.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 15.04.2025 թվականի թիվ 98-Ա, 17.04.2025 թվականի թիվ 100-Ա, 29.04.2025 թվականի թիվ 109-Ա, 14.05.2025 թվականի թիվ 138-Ա և 139-Ա, 19.05.2025 թվականի թիվ 140-Ա և 142-Ա «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» որոշումների հիման մեջ նշված «ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով» բառերը հանել:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 175-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԻՇԱՂ ԱՂԱՍՈՒ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09420 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Ա-121, 20.06.2025թ).

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Վարդիշաղ Աղասու Ավագյանին ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,09420 հա մակերեսով, 10-003-0032-0002 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Իսրայել Օրու փողոց, 1 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024SYEUW7):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 176-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,04035 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Վանիկ Նահապետի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Սարավան բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,04035 հա մակերեսով, 10-039-0103-0008 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Սարավան, Սարալանջ թաղամաս, 6/1 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20253EGXES):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 177-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՆԻԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով և հիմք ընդունելով 12.07.2024 թվականին տրված թիվ 1493 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել քաղաքացի Վանիկ Նահապետի Հարությունյանի /ծնված՝ 17.02.1934թ/ Վայք համայնք, գյուղ Սարավան, Սարալանջ թաղամաս, 6/1 հասցեում գտնվող 0.04035 հա մակերեսով հողամասի (ծածկագիր՝ 10-039-0103-0008), բնակելի տան և օժանդակ շինությունների սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 178-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00792 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00792 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0024-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Խորեն Շաբոյի Գայստյանի կողմից ինքնակամ կառուցված 187,53 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 51/39 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023LGB9YV):

2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:

3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 179-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՋԱՆԻԿ ԽԱՉԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00323 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Ջանիկ Խաչիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,00323 հա մակերեսով, 10-003-0024-0001-020-005 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Ս.Շահումյան փողոց, 99/6 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 180-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 142-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 19-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00380 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 142-Ա որոշման վերնագրում և բովանդակության 1-ին կետում գրված «բնակավայրերի նպատակային նշանակության» բառերը փոխարինել «արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության» բառերով, իսկ «բնակելի կառուցապատման գործառնական նշանակության» բառերը փոխարինել «գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 181-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Վայք համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ստեղծել Վայք համայնքում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հանձնաժողովի նախագահին՝
1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը,
2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:
3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 1
Հաստատված է
Վայք համայնքի ղեկավարի
« 24 » հունիսի 2025թ-ի N 181-Ա որոշմամբ

# Կ Ա Զ Մ

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| h/h | Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը | Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը | Հանձնաժողովում կարգավիճակը |
|---|---|---|---|
| 1 | Հայկ Ավագյան | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | Հանձնաժողովի նախագահ |
| 2 | Նորայր Հովակիմյան | Վայքի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ | Հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| 3 | Վարդուշ Հովսեփյան | Վայքի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետ | Հանձնաժողովի քարտուղար |
| 4 | Անուշ Արամյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 5 | Արամ Հովսեփյան | Վայքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտներ հաշվառման և հավաքագրման բաժնի պետ | Հանձնաժողովի անդամ |
| 6 | Մանե Ստեփանյան | Վայքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտներ հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ | Հանձնաժողովի անդամ |
| 7 | Սոնա Գրիգորյան | «Վայքի երիտասարդական կենտրոն» ՀԿ-ի նախագահ | Հանձնաժողովի անդամ |
| 8 | Էդուարդ Գասպարյան | Համայնքի ակտիվ բնակիչ | Հանձնաժողովի անդամ |
| 9 | Ոսկեհատ Բայաթյան | Կամավոր | Հանձնաժողովի անդամ |
| 10 | Ալբերտ Միրզաջիզյան | Կամավոր | Հանձնաժողովի անդամ |
| 11 | Անահիտ Պողոսյան | Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ մասնագետ | Հանձնաժողովի անդամ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 182-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 43-րդ հոդվածներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի երրորդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վայք համայնքի ղեկավարի 17.60.2025 թվականի թիվ 110 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ստուգայցի արդյունքում կազմված հողերի օգտագործման և պահպանման խախտումների թիվ 1 ակտը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.«ՋԻԵՄՋԻ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Կարո Միքայելյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 3-րդ մասի, այն է՝ հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելը:
2. Տուգանքի չափը սահմանել՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Տուգանքի գումարը ենթակա է վճարման Վայքի համայնքապետարանի 900345101407 հաշվին՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 183-Ա

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐԴՈՒՀԻ ԳԱՍՊԱՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Վայք համայնքի բնակիչ՝ Վարդուհի Գասպարյանի դիմումը և Վայք համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025թ.-ի հունիսի 24-ի թիվ 4 արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Թույլատրել Վարդուհի Գասպարի Գասպարյանին /անձնագիր AL0290701/, հանդես գալու որպես իր անչափահաս երեխաներ՝ Կարմելա Արայի Շահբազյանի՝ ծնված 23.02.2010 թվականին և Մենուա Արայի Շահբազյանի՝ ծնված 15.01.2019 թվականին, օրինական ներկայացուցիչ, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անչափահաս երեխաներին պատկանող Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, ք. Վայք Շահումյան թողոց 99/26 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բնակարանը 66 քմ մակերեսով /ծածկագիր՝ 10-003-0024-0001-099-026/ օտարելու ցանկացած գնով, ցանկացած պայմաններով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*27 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ Ու Մ N 184-Ա

## ԶՈՀՐԱԲ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0700 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝

# Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Զոհրաբ Հակոբի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,0700 հա մակերեսով, 10-003-0002-0038 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Սիամանթոյի փողոց, 4 հողամաս:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*27 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 185-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0500 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,0500 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-019-0002-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Գոմք, 2-րդ փողոց, 1/1 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025ERXHEC):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*27 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 186-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՎՈՂ 2,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության փոխադրվող 2,0 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-019-0327-0062 կադաստրային ծածկագրով հողամասը, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Գոմք, 3-րդ փողոց, 2/5 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025UVHXSZ):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**